

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ  
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Հերթական ատեստավորման ենթակա ֆիզիկական կուլտուրայի  
ուսուցիչների վերապատրաստման դասընթացներ

### **ԱՐԹՈՒՐ ԱՇՈՏԻ ԲԵԳՅԱՆ**

ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ «ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱ»  
ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Հետազոտական աշխատանք

Ղեկավար՝ մանկավարժական  
գիտությունների թեկնածու, դոցենտ Ա. Գ.  
Ստեփանյան

ԵՐԵՎԱՆ 2022  
**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

Ներածություն.....3

Գնահատման նպատակը, խնդիրները և  
սկզբունքները.....5

«Ֆիզիկական կուլտուրա» առարկայի գնահատման նպատակը, ձևերն ու  
ստուգման տեսակները.....7

«Ֆիզիկական կուլտուրա» առարկայի ընթացիկ միավորային գնահատում.....9

«Ֆիզիկական կուլտուրա» առարկայի բանավոր հարցման գնահատում.....10

«Ֆիզիկական կուլտուրա» առարկայի գործնական աշխատանքի գնահատում.....12

Կիսամյակային և տարեկան գնահատականի ձևավորման կարգը.....14

Գնահատման 10 միավորային սանդղակի կիրառում ֆիզիկական կուլտուրայի  
դասերին.....16

Եզրակացություններ.....17

Օգտագործված գրականության ցանկ.....18

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

**Արդիականություն:** Հանրակրթության համակարգում կատարվում են լուրջ բարեփոխումներ, որոնց նպատակն է կրթության որակի բարելավումն ու ժամանակակից պահանջներին համապատասխան գործունեության ապահովումը:

Հանրակրթության ոլորտում ընթացող բարեփոխումներում առանցքային դեր է վերագրվում աշակերտի գիտելիքի, կարողությունների ու հմտությունների գնահատման և արժևորման համակարգին: Այս համատեքստում կարևոր է ընթացիկ գնահատումների կանոնակարգված համակարգ ունենալը, քանի որ ողջ ուսումնական գործընթացն ուղեկցվում է գնահատման համակարգի կիրառմամբ:

Գնահատման նոր համակարգի ներդրումը պայմանավորված է հանրակրթության ոլորտում տեղի ունեցող համակողմանի փոփոխություններով, կրթության որակը արմատապես բարելավելու և յուրաքանչյուր սովորողի ուսումնական գործունեությունը խթանելու, ակտիվացնելու և շարունակաբար զարգացնելու անհրաժեշտությամբ:

Կրթության որակ ասելով հասկանում ենք կրթակարգով, պետական չափորոշչով և ծրագրերով ներկայացվող պահանջներին սովորողի համապատասխանության աստիճանը:

Հանրակրթության գլխավոր նպատակը սովորողների մտավոր, հոգևոր, ֆիզիկական և սոցիալական ունակությունների համակողմանի ու ներդաշնակ զարգացումն է:

Այս համատեքստում իր ուրույն տեղն ունի «Ֆիզիկական կուլտուրա» առարկան, որի նպատակն է ձևավորել այնպիսի քաղաքացի, որը լինի առողջ, ներդաշնակ զարգացած, բավարար ֆիզիկական պատրաստվածությամբ և ունենա տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու, նախաձեռնելու և կազմակերպելու ունակություններ:

Ներկայացվում են գնահատման նոր համակարգի նպատակն ու խնդիրները, սկզբունքները, 10 միավորային գնահատման տեսակները: Հանգամանորեն ներկայացված են նաև «Ֆիզիկական կուլտուրա» առարկայից աշակերտների

գիտելիքների, կարողությունների, հմտությունների և արժեքային համակարգի գնահատման ու արժևորման ժամանակակից ձևերը ու ստուգման տեսակները:

**Հետազոտության նպատակ:** Ուսումնասիրել գնահատման մոտեցումները «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի դասավանդման գործընթացում, հանգելով համապատասխան հետևությունների, ուսումնական գործընթացը արդյունավետ կազմակերպելու համար: Դպրոցականների գիտելիքների, կարողությունների և հմտությունների մակարդակը ավելի հիմնավորված բացահայտելու և գնահատելու համար:

Հետազոտական աշխատանքի ուսումնասիրության նպատակն է վերլուծել գնահատականը որպես մոտիվացիա, և բացահայտել գնահատումը որպես կրթության որակի բարելավման միջոց:

## ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ, ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Գնահատումը տեղեկություն ստանալու, վերլուծելու և դրա հիման վրա հանրակրթության իրականացման բովանդակային և կազմակերպչական աշխատանքների արդյունքները ի մի բերելու և վերահսկելու գործընթաց է: Գնահատումն ուսումնական գործընթացի արդյունավետության և ուսուցման արդյունքների բացահայտման միջոց է:

Գնահատմամբ պարզվում է յուրաքանչյուր սովորողի և դպրոցի կողմից առարկայական ու դպրոցական չափորոշիչների ու ծրագրերի պահանջների կատարման ամբողջական պատկերը:

Գնահատման հիմնական նպատակն է սովորողի գիտելիքների մակարդակի, կարողությունների ու հմտությունների տիրապետման ստուգումը, արժեքային որակների ձևավորման ապահովումը և դրանց հիման վրա ուսումնական գործընթացի արդյունավետության, ուսումնական որակի բացահայտումն ու վերահսկումը:

Գնահատման խնդիրներն են.

- **Գնահատում ենք** գնահատական դնելու համար և ուսուցումը խթանելու համար:

Գնահատումը պլանավորվում և իրականացվում է այնպես, որ սովորողին մղի համագործակցության և նպաստի նրա ակտիվ մասնակցությանը ուսուցման գործընթացին:

- **Գնահատում ենք սովորողի աշխատանքի արդյունքները և գործընթացը:**

Գնահատվում է ոչ միայն սովորողի աշխատանքի արդյունքը, այլև այդ արդյունքին հասնելու գործընթացում կիրառված համագործակցային հմտությունները: Սովորողները չպետք է մտածեն, թե դրանք պակաս կարևոր են և, որ դրանք դուրս են ուսուցչի գնահատման տիրույթից:

- **Գնահատում է՝ ուսուցիչը, սովորողը՝ ինքն իրեն և խումբը:**

Գնահատում է ուսուցիչը, բայց այդ գնահատականը կարող է աշակերտի համար լինել ոչ ճշգրիտ, եթե նա չսովորի գնահատել ինքն իրեն: Օբյեկտիվ ինքնագնահատումը ինքնաճանաչման լավագույն նախապայմանն է: Գնահատում է նաև խումբը: Հաճախ խմբի գնահատականն ավելի օգտակար, արժեքավոր և հավաստի է նրա անդամների համար:

- **Գնահատում ենք գնահատականով, հետադարձ կապով:**

Սոցիալական հմտությունների գնահատման համար կիրառելի են նաև ուսուցչի և (կամ) սովորողների կողմից մշակված գնահատման սանդղակները:

Համագործակցային ուսուցման մեջ ավելի կարևոր դեր ունի հետադարձ կապի ապահովումը, որը բարելավում է խմբային գործընթացը, ամրապնդում ձեռք բերված գիտելիքներն ու զարգացման սոցիալական հմտությունները:

- **Գնահատում ենք սովորելուց առաջ, սովորելու ընթացքում և սովորելուց հետո:**

Սակայն գնահատման չափանիշները սահմանվում են նախօրոք:

Կարևոր է, որ աշակերտը նախապես իմանա՝ ինչ է ակնկալվում իրենից, և ինքն ինչ պիտի անի լավ արդյունքի հասնելու համար: Իսկ սովորելու ընթացքում կատարվող գնահատումը հնարավորություն է տալիս բարելավելու գիտելիքներն ու հմտությունները՝ մինչև աշխատանքը ավարտելը:

Եթե աշակերտներին պարզապես բաժանենք խմբերի և առաջարկենք միասին աշխատել, ապա դա չի նշանակում, որ նրանց մղել ենք արդյունավետ համագործակցության: Այն պետք է իրականացնել այնպես, որ այն սովորողին մղի համագործակցության և նպաստի նրա ակտիվ մասնակցությանը ուսուցման գործընթացին:

Անհրաժեշտ է սովորողներին ներգրավել գնահատման պլանավորման մեջ՝ սովորեցնելով մշակել գնահատման չափանիշներ (սանդղակ): Այդ դեպքում՝ նախ նրանք կսովորեն գնահատել, երկրորդ՝ կիմանան, թե ինչ է պահանջվում իրենցից, երրորդ՝ կմեծանա նրանց պատասխանատվությունը:

Համագործակցային ուսուցման գնահատումը խթանում է խմբի աշխատանքի արդյունքը երկու տեսանկյունից՝ գնահատելով աշխատանքի վերջնական արդյունքը և

սովորողների համագործակցությունը, որը տվել է այդ արդյունքը: Ուսուցիչը գնահատում է այդ արդյունքը ստանալու համար սովորողի ներդրած ջանքերը:

**«ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒՆՏՈՒՐԱ» ԱՌԱՐԿԱՅԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ  
ՆՊԱՏԱԿԸ, ՁԵՎԵՐՆ ՈՒ ՍՏՈՒԳՄԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ**

Հանրակրթական դպրոցի սովորողների գնահատումն ուսումնական գործընթացի արդյունավետության և ուսուցման արդյունքների բացահայտման միջոց է: Գնահատման միջոցով պարզվում է յուրաքանչյուր սովորողի կողմից առարկայական չափորոշիչների ու ծրագրերի պահանջների կատարման ամբողջական պատկերը:

Ֆիզիկական կուլտուրա առարկայի գնահատման հիմնական նպատակն է սովորողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների յուրացման աստիճանի ստուգումը, արժեքային որակների ձևավորման ապահովումը, ուսումնական որակի բացահայտումն ու վերահսկումը:

Գնահատումը պլանավորվում և իրականացվում է այնպես, որ սովորողին մղի համագործակցության և նպաստի նրա ակտիվ մասնակցությանը ուսուցման գործընթացին:

«Ֆիզիկական կուլտուրա» առարկայի գնահատման միջոցով պարզվում է յուրաքանչյուր սովորողի կողմից առարկայի չափորոշիչների և ծրագրային պահանջների կատարման ընթացքը և ամբողջական պատկերը:

Ֆիզիկական կուլտուրա առարկայի գնահատման ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել երեխաների ֆիզիկական զարգացման առանձնահատկությունները, անհատականությունը, ինչպես նաև՝ թե սովորողը բժշկական որ խմբում է ընդգրկված:

Ֆիզիկական կուլտուրայից աշակերտների առաջադիմության գնահատականը պետք է ծառայի մեկ նպատակի՝ խթանի աշակերտների ծգտմանը՝ բարելավելու և

ամրապնդելու իրենց շարժողական հնարավորությունները: Առաջադիմությունը գնահատվում է որակական և քանակական ցուցանիշներով. այն՝ աշակերտի կողմից ձեռք բերած համապատասխան գիտելիքների լիարժեքությունը, շարժողական կարողությունների և հմտությունների յուրացման կայունությունը, մատչելի ֆիզիկական վարժությունները ինքնուրույն կատարելու կարողությունը, տնային հանձնարարությունների կատարումը, ֆիզկուլտուրային-առողջարարական և մարզական միջոցառումներին ակտիվ մասնակցությունը:

«Ֆիզիկական կուլտուրա» առարկայից պետք է գնահատվեն սովորողների գիտելիքները, կարողությունները, հմտությունները և արժեքները:

Սովորողների գնահատումը հիմնականում կատարում է ուսուցիչը, բայց այն կարող է կատարել նաև խումբը, ինչպես նաև աշակերտը՝ ինքն իրեն: Օբյեկտիվ ինքնագնահատումը ինքնաճանաչման լավագույն գրավականն է:

Ֆիզիկական կուլտուրա առարկայի գնահատումը իրականացվում է ընթացիկ և ամփոփիչ գնահատականներով՝ 10 միավորային սանդղակով:

Սովորողների ընթացիկ գնահատումը բաղկացած է երկու իրար լրացնող ձևերից՝

- **Առաջադիմության միավորային գնահատում**, որը կիրառվում է սովորողի կողմից ամբողջական թեմայի յուրացման աստիճանը ստուգելիս և իրականացվում է գնահատականը գրանցելու-հաշվառելու միջոցով:

- **Ուսուցողական գնահատում**, որն իրականացվում է առանց գնահատականը գրանցելու և սովորոբար ուղեկցվում է ուսումնական առաջադրանքի կատարման կամ նյութի յուրացման վերաբերյալ ուսուցչի կողմից արված առաջարկություններով, դիտողություններով:



## «ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒՆՏՈՒՐԱ» ԱՌԱՐԿԱՅԻ ԸՆԹԱՑԻԿ

### ՄԻԱՎՈՐԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

«Ֆիզիկական կուլտուրա» առարկայի միավորային գնահատումն աշակերտի ուսումնական ձեռքբերումների նիշային կամ թվային արտահայտությունն է, որի միջոցով պատկերացում է կազմվում կրթական պահանջների աշակերտի համապատասխանության աստիճանի մասին:

Միավորային գնահատումն իրականացվում է ուսումնական նյութի որոշակի մասն ուսումնասիրելուց հետո և ունի վերահսկող դեր:

«Ֆիզիկական կուլտուրա» առարկայի ընթացիկ միավորային գնահատումը կատարվում է ծրագրային տարբեր բաժիններից՝ «Գիտելիքների հիմունքներ», «Մարմնամարզական վարժություններ», «Աթլետիկական վարժություններ», «Մարզախաղեր», «Շարժախաղեր»:

«Ֆիզիկական կուլտուրա» առարկայի ընթացիկ արդյունքների միավորային գնահատում կատարվում է հետևյալ ստուգման տեսակներով՝

**բանավոր հարցում,**

**գործնական աշխատանք:**

Ստուգման այս տեսակները նպատակ ունեն տարբեր տեսանկյունից չափելու աշակերտի գիտելիքները, կարողություններն ու հմտությունները:

Ստուգման յուրաքանչյուր տեսակ իր կիրառման ընդհանուր ծավալով պետք է ընդգրկի տվյալ առարկայի՝ գնահատման ենթակա կիսամյակային ամբողջ ուսումնական ծրագրային նյութը և դրան բնորոշ կրթության բովանդակային բաղադրիչները: Մեկ կիսամյակում ստուգման յուրաքանչյուր տեսակի կիրառման հաճախականությունը որոշելու նպատակով ծրագրային նյութը բաժանվում է մասերի, որոնք կոչվում են թեմաներ:

Միավորային գնահատման նպատակով կարելի է նաև օգտագործել թեմատիկ թեստային աշխատանքներ, ինչպես նաև տնային առաջադրանքները՝ որպես բանավոր հարցումներ:

Տարբեր բաղադրիչներով միավորային գնահատումն օգնում է առավել ամբողջական պատկերացում կազմելու սովորողի մասին:

**«ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒՆՏՈՒՐԱ» ԱՌԱՐԿԱՅԻ ԲԱՆԱՎՈՐ  
ՀԱՐՑՄԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ**

Բանավոր հարցումը գնահատման մի տեսակ է, որի ժամանակ աշակերտը բանավոր խոսքով ներկայացնում է յուրացրած ուսումնական նյութը՝ դրսևորելով ձեռք բերած գիտելիքները, կարողություններն ու հմտությունները:

Ֆիզիկական կուլտուրայի բանավոր հարցման ժամանակ աշակերտը բանավոր խոսքով ներկայացնում է յուրացրած ուսումնական նյութը՝ միաժամանակ դրսևորելով ձեռք բերած գիտելիքներն ու կարողությունները:

Բանավոր հարցման հիմնական առավելությունն այն է, որ դրանով ստուգվում են սովորողի ոչ միայն մտապահման ու վերարտադրման ընդունակությունները, այլ նաև նյութի գիտակցված ընկալման մակարդակը:

Այն ավելի ամբողջական պատկերացում է տալիս աշակերտի մտավոր կարողությունների, գիտելիքների յուրացման, լեզվամտածողության, վերարտադրելու և ստեղծագործական կարողությունների մասին:

Բանավոր հարցման միջոցով պարզվում են սովորողի ձեռքբերումները հետևյալ ուղղություններով.

- բանավոր խոսք,
- վերարտադրություն,
- հաղորդակցություն,
- համագործակցություն,
- լեզվամտածողություն,
- գիտելիքի յուրացում,
- տրամաբանություն,
- ստեղծագործական մտածողություն:

Բանավոր հարցում կարելի է իրականացնել՝

- առանձին սովորողների հարցման միջոցով,
- աշակերտներին ուղղված բանավոր հարցերի միջոցով,

- համագործակցային /խմբային/ կամ փոխներգործուն մեթոդների, տեխնոլոգիաների կիրառմամբ:

Բանավոր հարցումը կարելի է գնահատել հետևյալ հիմնական չափանիշներով.

- գիտելիքի իմացություն
- կիրառելու կարողություն
- ներկայացնելու կարողություն
- միջառարկայական կապեր տեսնելու կարողություն:

Բանավոր հարցման գնահատումը առաջարկում ենք մեկ կիսամյակում յուրաքանչյուր երեխայի համար առնվազն երկու անգամ:

**«ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒՆՏՈՒՐԱ» ԱՌԱՐԿԱՅԻ ԳՈՐԾՆԱԿԱՆ  
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ**

Հանրակրթական դերը պայմանավորված է նաև նրա գործնական-կիրառական նշանակությամբ: Ժամանակակից պայմաններում ուսուցման կարևոր նպատակներից մեկն է աշակերտին սովորեցնել ձեռք բերած գիտելիքներն ու կարողությունները կիրառել կյանքում հանդիպող տարբեր իրադրություններում, տարբեր գործնական խնդիրներ լուծելիս:

Գործնական անվանենք սովորողների կողմից կատարվող այն աշխատանքները, որոնք վերաբերում են նրանց ձեռք բերած գիտելիքների, կարողությունների և հմտությունների գործնական կիրառություններին:

Գործնական աշխատանքներն են ուսումնական փորձերն ու լաբորատոր աշխատանքները, ինչպես նաև ուսումնական գործընթացում նախատեսվող ֆիզիկական պատրաստվածությունն ու այլ ֆիզիկական աշխատանքներ:

Կարևոր է նկատի ունենալ, որ սովորողների սոցիալական հմտությունների զարգացումն ու արժեքային համակարգի ձևավորումը դիտվում են որպես ուսումնական թեմաների ուսուցմանն ուղեկցող պահանջներ:

Գործնական աշխատանքների հիմնական նպատակներն ու խնդիրներն են.

- Ձևավորել և զարգացնել սոցիալական հմտություններ,
- Մատուցել կիրառման համար անհրաժեշտ տեսական և գործնական նյութ,
- Նպաստել անհատի ինքնադրսևորմանը, կենսագործունեությանը և կրթության շարունակականության ապահովմանն ուղղված հմտությունների զարգացմանը:

Սովորողներին ներկայացվող չափորոշչային և ծրագրային պահանջների համաձայն նախատեսվում են տարբեր բնույթի ու տիպի գործնական աշխատանքների կատարում:

«Ֆիզիկական կուլտուրա» առարկայից գործնական են համարվում սովորողների կողմից կատարվող այն աշխատանքները, որոնք վերաբերում են նրանց ձեռք բերած գիտելիքների, կարողությունների և հմտությունների գործնական կիրառություններին:

Գործնական են նաև ուսուցման գործընթացում նախատեսվող սովորողների ֆիզիկական պատրաստվածությանը նպատակաուղղված աշխատանքները:

«Ֆիզիկական կուլտուրա» առարկայի դասերն հիմնականում գործնական աշխատանքներ են, որոնց ժամանակ գնահատվում է սովորողների կողմից ուսումնական ծրագրով նախատեսված տարբեր բաժինների՝ մարմնամարզական, աթլետիկական տարբեր վարժությունների, շարժախաղերի, մարզախաղերի (ֆուտբոլ, վոլեյբոլ, բասկետբոլ, հանդբոլ) գործնական կատարումները:

Գործնական աշխատանքները մեկ կիսամյակում գնահատվում են՝

- 4-11-րդ դասարաններում առնվազն 12 անգամ,
- 2-րդ, 3-րդ և 12-րդ դասարաններում՝ 8 անգամ:

12-րդ դասարանում գնահատումը կատարում են միայն առաջին կիսամյակում՝ 8 գործնական, 2-րդ կիսամյակում գնահատում չի կատարվում, տրվում են կրկնություններ քննությանը նախապատրաստվելու նպատակով:

12-րդ դասարանում 1-ին կիսամյակի գնահատականը (ԿԳ) դառնում է տարեկան գնահատական :

Տարբեր բաղադրիչներով /բանավոր, գործնական/ միավորային գնահատումն օգնում է առավել ամբողջական պատկերացում կազմել սովորողի մասին:

Ստուգման յուրաքանչյուր տեսակ իր կիրառման ընդհանուր ծավալով պետք է ընդգրկի գնահատման ենթակա կիսամյակային ամբողջ ծրագրային ուսումնական նյութը և դրան բնորոշ կրթության բովանդակային բաղադրիչները:

Ստուգման յուրաքանչյուր տեսակ իր հերթին ներկայացվում է տարբեր բնույթի առաջադրանքներով:

Միավորային գնահատումը ունի մրցակցային բնույթ, և դրանով իսկ նրա դերը դառնում է չափազանց կարևոր:

**ԿԻՍԱՄՅԱԿԱՅԻՆ ԵՎ ՏԱՐԵԿԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԻ  
ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ**

«Ֆիզիկական կուլտուրա» առարկայից յուրաքանչյուր կիսամյակի վերջում աշակերտը ունենում է կիսամյակային գնահատական, իսկ ուսումնական տարվա ավարտին՝ տարեկան գնահատական:

Կիսամյակի ընթացքում ստուգման յուրաքանչյուր տեսակից (բանավոր, գործնական) աշակերտը ունենում է գնահատականներ, որոնց հիման վրա նշանակվում է կիսամյակային գնահատականը:

Դպրոցականի կիսամյակի գնահատականը ձևավորվում է ստուգման 2 տեսակների՝ բանավոր հարցման, որը մեկ կիսամյակում նախատեսվում է կատարել առնվազն 2 անգամ, և գործնական աշխատանքների գնահատման՝ 12 անգամ /մեկ կիսամյակում/ գնահատականների հիման վրա:

Աշակերտի կիսամյակային գնահատականը ձևավորելիս պետք է առաջնորդվել գնահատման բաղադրիչների միջին թվաբանականը հաշվարկելու բանաձևով:

Այն ձևավորում է հետևյալ կերպ.

Նմուշօրինակ՝

Դիցույ՛ք մեկ սովորող «Ֆիզիկական կուլտուրա» առարկայից մեկ կիսամյակում ըստ գնահատվող բաղադրիչների ստացել է հետևյալ գնահատականները.

1. Բանավոր հարցում (Բ) 6, 8
2. Գործնական աշխատանք (Գ) 9, 7, 9, 7, 7, 9, 8, 9, 7, 8, 8, 8

Աշակերտի կիսամյակային գնահատականը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$ԿԳ = (Բ + Գ) : 14 = (6+8+9+7+9+7+7+9+8+9+7+8+8+8) : 14 = 8$$

Սովորողի կիսամյակային վերջնական գնահատականը կլինի՝ ԿԳ = 8 միավոր:

«Ֆիզիկական կուլտուրա» առարկայից աշակերտի տարեկան գնահատականը ձևավորվում է երկու կիսամյակների գնահատականների միջին թվաբանականի հիման վրա: Եթե այն ամբողջ թիվ չէ, ապա որպես տարեկան գնահատական նշանակվում է այդ թվին անմիջապես հաջորդող թիվը, եթե երկրորդ կիսամյակի

գնահատականը մեծ է առաջինից, իսկ հակառակ դեպքում՝ այդ թվին անմիջապես նախորդող ամբողջ թիվը:

Օրինակ՝ եթե 1-ին կիսամյակի գնահատականը 8 միավոր է, իսկ 2-րդ կիսամյակի գնահատականը՝ 9 միավոր է, ապա տարեկան գնահատականը կլինի՝

$$S_9 = 8 + 9 = 8,5 = 9 \text{ միավոր:}$$

Եթե 1-ին կիսամյակի գնահատականը 9 միավոր է, իսկ 2-րդ կիսամյակի գնահատականը 7 միավոր է, ապա տարեկան գնահատականը կլինի՝

$$S_9 = 9 + 7 = 8 \text{ միավոր:}$$

## ԳՆԱՀԱՏՄԱՆ 10 ՄԻԱՎՈՐԱՅԻՆ ՍԱՆԴՂԱԿԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

### ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒՆՏՈՒՐԱՅԻ ԴԱՍԵՐԻՆ

- 1 միավոր** գնահատվում է, երբ աշակերտը բացարձակ չի մասնակցում դասերին:
- 2 միավոր** գնահատվում է, երբ աշակերտը հրաժարվում է կատարել վարժությունը:
- 3 միավոր** գնահատվում է, երբ աշակերտը ամբողջությամբ սխալ է կատարում վարժությունը:
- 4 միավոր** գնահատվում է, երբ աշակերտը վարժությունը կատարում է, բայց անվստահ է, լարված և թույլ է տվել 2-ից ավելի նշանակալից սխալ:
- 5 միավոր** գնահատվում է, երբ աշակերտը վարժությունը հիմնականում կատարում է ճիշտ, բայց միաժամանակ թույլ է տվել 1 նշանակալի և 3 աննշան սխալ:
- 6 միավոր** գնահատվում է, երբ աշակերտը վարժությունը հիմնականում կատարում է ճիշտ, բայց միաժամանակ թույլ է տվել 1 նշանակալի և 2 աննշան սխալ:
- 7 միավոր** գնահատվում է, երբ աշակերտը վարժությունը կատարում է ճիշտ, ազատ, առանց լարվելու, բայց միաժամանակ թույլ է տվել 2 աննշան սխալ:
- 8 միավոր** գնահատվում է, երբ աշակերտը վարժությունը կատարում է ճիշտ, անկաշկանդ, պահպանել է ծրագրային պահանջները, բայց թույլ է տվել 1 աննշան սխալ:
- 9 միավոր** գնահատվում է, երբ աշակերտը վարժությունը կատարում է ճիշտ, ռիթմով, անկաշկանդ, պահպանել է ծրագրային բոլոր պահանջները:
- 10 միավոր** գնահատվում է, երբ աշակերտը վարժությունը կատարում է ճիշտ, միաձույլ, հստակ, սահուն, վստահ՝ պահպանելով ծրագրային բոլոր պահանջները, ցուցաբերում է բարձր արդյունքներ:



## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վերլուծելով աշխատանքը պարզ է դառնում, որ գնահատումը նպաստում է դասավանդման և ուսումնառության արդյունավետության բարձրացմանը: Դրանից հատկապես մեծ օգուտ կունենան ցածր առաջադիմության աշակերտները, իսկ առաջավոր աշակերտները առավել կխորացնեն իրենց գիտելիքները:

Գնահատումը մեզ ուսուցիչներիս հնարավորություն է տալիս պարզելու յուրաքանչյուր սովորողի ձեռքբերումները, դժվարությունները և իրավիճակի վերլուծությունից հետո մշակել հետագա գործողությունների քայլերը՝ ընթացիկ առաջադիմությունը բարելավելու համար:

Սովորողներն ուսուցչի օգնությամբ, ինքնագնահատմամբ և փոխադարձ գնահատումների միջոցով պարզում են տվյալ ուսումնական թեմայի յուրաքանչյուր քայլի յուրացման աստիճանը:

Աշակերտների հետ աշխատելիս ուսուցչի կարևորագույն խնդիրն է հայտնաբերել նրա ընդունակությունները, գնահատել, խրախուսել դրանք և ցուցաբերել անհատական մոտեցում դրանց պահպանման ու զարգացման համար:

Գնահատման բացակայությունը դրդում է աշակերտներին, դրանով իսկ զրկելով նրանց սովորելու դրդապատճառից և դանդաղեցնելով բուն կրթական գործընթացը: Առանց ուսուցչի գնահատման աշակերտը չի կարող խորապես գիտակցել իր արարքը՝ իր բոլոր կապերով, հետևանքներով և օբյեկտիվ արդյունքներով:

Գնահատականը կրթական համակարգում պետք է օգտագործվի որպես խրախուսանք և ոչ թե պատժամիջոց:

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Միքայելյան Օ. Ս. «Ընթացիկ գնահատման նոր համակարգը որպես կրթության որակի բարելավման խթան»: Ուսուցչի ձեռնարկ Երևան 2010թ.
2. Գրիգորյան Յու. Գ., Մինասյան Հ. Ս. Հանրակրթական դպրոցի « Ֆիզիկական կուլտուրա» առարկայի չափորոշիչ և ծրագիր 1-12-րդ դասարաններ: Երևան 2007թ.
3. Գրիգորյան Յու. Գ., Մինասյան Հ. Ս. Հանրակրթական ավագ դպրոցի «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի չափորոշիչ և ծրագիր: Երևան 2009թ.
4. Ղազարյան Ֆ. Գ. Մարդու ֆիզիկական վիճակի մոնիթորինգը, Երևան, հեղինակային հրատարակություն, 2007թ.
5. Ստեփանյան Ա. Գ. Տնային հանձնարարությունները «Ֆիզիկական կուլտուրա» առարկայից, ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան 2010թ.
6. Սովորողների առաջադիմության գնահատման ընթացակարգ. ՀՀ ԿԳՆ Երևան 2007թ.
7. Մինասյան Հ. Ս., Գաբրիելյան Հ. Հ. «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի «Գիտելիքների հիմունքներ» բաժնի ուսուցումը 1-12-րդ դասարանների համար: Ուս. ձեռնարկ 2011թ.
8. Գաբրիելյան Հ. Հ., Ստեփանյան Ա. Գ. և ուրիշներ «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի «Ուսումնական նյութի պլանավորում» 1-9-րդ դասարանների համար: Ուս. ձեռնարկ 2011թ.